ՏԵՂԵԿԱՆՔ
Գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### Հոդված 94. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքի նախագիծը ներկայացնելու և քննարկելու կարգը

1. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքի նախագծի նախաձեռնության իրավունքը պատկանում է Կառավարությանը:

2. Համայնքների միավորման կամ բաժանման դեպքում այդ համայնքների ղեկավարներն իրավունք ունեն Ազգային ժողով ներկայացնելու միավորման կամ բաժանման վերաբերյալ իրենց գրավոր կարծիքը, իսկ Ազգային ժողովում կամ գլխադասային հանձնաժողովում հարցի քննարկման ընթացքում՝ հանդես գալու հարակից զեկուցմամբ:

3. Համայնքների ղեկավարները հարցի քննարկմանը մասնակցելու վերաբերյալ իրենց գրավոր դիմումներն Ազգային ժողովի նախագահին են ուղարկում համապատասխան օրենքի նախագիծն Ազգային ժողովում շրջանառության մեջ դրվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3.1 Ազգային ժողովը համայնքների միավորման կամ բաժանման մասին համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը:

3.2 Գլխադասային հանձնաժողովը մինչև օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացություն տալը հրավիրում է խորհրդարանական լսումներ՝ միավորվող կամ բաժանվող համայնքների կարծիքը լսելու համար:

3.3 Համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ անցկացված խորհրդարանական լսումների արձանագրությունը գլխադասային հանձնաժողովի կողմից սույն օրենքի 78-րդ հոդվածով սահմանված կարգով տրված եզրակացության հետ միասին ներկայացվում է Ազգային ժողով:

4. Վարչատարածքային բաժանման մասին օրենքի նախագիծը գլխադասային հանձնաժողովում կամ Ազգային ժողովում կարող է քվեարկության դրվել միայն Կառավարության համար ընդունելի ուղղումներով: